

Ամբաստանի զհաւատարիմ խորհրդական ի գործ չարութեան, որոյ ի վարձ փոխարինի հատոյց ամիրապետն՝ զբանաւ և կոպանա ի մահ՝ զարդարապետ հատուցումն թէ և խոստովանութեամբ ի Վրիստոս, որով և խոստովանողն կոչեցաւ. իբր զի ի ներկայանալ ամիրապետին բոլոր կապելոցն ի Բուզայէ, և ի ստիպելն նորա զնոսա յուրացութիւն, կապեաց և զԱմբաստ և եղ ի բանտի. յորոց ոմանք զանգիտեալք՝ զարձան. այլք գրեթէ ամենեքին՝ արտաքուստ ուրացան զքրիստոնէութիւն, բայց երեքն ի նոցունց՝ Ատեփաննոս Ան կոչեցեալ՝ Վրիգոր Մամիկանեան՝ և Արմբատ սպարապետ՝ չառնով յանձն զուրացութիւն, Ատեփաննոս ասնջանօք կատարեցաւ, Վրիգոր փախստեաց ի բանտէ՝ հասեալ ի Բագրեանդ գաւառ ի Վազանաձագ անուանեալ տեղին, ուր և յիտ եօթն աւուրց վաղձանի՝ գլուխն առ ամիրապետն առաքի յԱշոտոյ որդւոյն Ամբասայ. և Ամբաս զգլխմամբ սրտի՝ աւանդէ զհոգի ի բանտին: Օրով ի հատորն 4:

(Ի 1-1-1-1)

ԱՐԱ. ԱՐՔԵՊԵՍՏՈՊՈՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀՈՒՓՍԻՄԷ:

Մէքի ընդ գործուցէք Հոռոմոց աշխարհին ծանապարհները. արեղակը փերջին ծառադայթիները ամփոփած երեկոյեան շամանդաղը կամայ կամոց կպատէր՝ խումբ մի ծպտեալ աղջիկներ Հոռով

քաղաքին դռնէն ելան. երեսնին քօղով ծածկուած ոչ ոք զիրենք չձանչցաւ: Պահ մի հազիւ թէ անցած էր, նոցա ետէն գունդ գունդ լէզէոններ ելան, և քաղաքին դռները փակուելով՝ ոչ մուտք և ոչ ելք կթողուն. սահանագլուխ աշխարհները զօրաց բանակներ զինեալ կեցած են Հոռոմոց թագաւորին հրամանաւ, պահապանք կքալին ամեն պողոտայ, կքննեն, կհարցանեն և փախստական աղջիկ մի կփնտռեն: Բայց այն աղջիկը ընկերակիցներով խմատին արդէն Հոռոմոց աշխարհէն հեռացած Հայաստանի սահմանը մտաւ. քաղաքին դռները կրկին բացուեցան, լէզէոնները յոգնած յետ դարձան և չգտան այն աղջիկը. Վրիգոր ատեփանոս արտմութեան և յուսահատութեան մէջ ընկզմած հրովարտակ կղբկէ հեռաւոր աշխարհներ ի Պարսկաստան, ի Յունաստան, յԱզիպոսս, և ի Հայաստան, որ այն փախստական աղջիկը փնտռեն, դանեն և իրեն զրկեն:

Հոռի ամայն օրերն էին. Հայոց թագը Տրգատայ ձակաւոր կձաձանչէր, և արքայական գաւազանին Հայաստան խոնարհած՝ խաղաղութեամբ և փառօք կը ծաղկէր. Պարսկաստան նուաձեալ և ընկձեալ՝ չէր յանդգնէր ասպատակ հանել. թշնամեաց զէնքերը փշուած, հատած, նոցա բանակները Հայոց հսկոյ թագաւորն ջարդած սպառած, գերեզմանաց մէջ փակած, կնքած էր. արեւմուտք հեար դաշնակից, արեւելք իրմէ կողոպտ, և Հայաստանի բազմաչարչար սուրբ Հայրը Արաշատու Խոր-Վիրապին մէջ ի բանտ մահու արգելած, դիցապաշտ թագաւորին ձեռքէն ճշմարիտ հաւատքին հա-

մար և Անակայ դաւածանու թեան պատիժը քաղելով Հայաստանի փրկութեան համար կազօթէ:

Աոյն ամսոյն Ասկեմօր Ասկեծին գից պաշտաման առաւօտն էր. թագաւորանիստ քաղաքը Աստղարշապատ արեւմտեալ կողմէն. ժողովուրդը ծանապարհաց զըլուխները զիղուած, ոմանք թագաւորական ապարանքը, և ոմանք ևս քաղաքին հիւսիսային կողմը կվսգեն. ահա դաւազանակիր ծերունի մը ելաւ արքունի պողոտայէն, որ ամեն ծանապարհաց զըլուխները կանգնելով այսպէս քորոզ կկարդար. « Այսօր Հայոց քաջայարթ թագաւորին հարսանիքն է, վագեցէք հիւսիսակողմը թագուհւոյն ընդ առաջ , , :

Աստ արքունի պիւճութեան ամենայն ինչ շքեղ և ծոխ էր, և հարսանեաց հանդէսը սկսած. թագաւորական ապարանքին վերայ այն արծուանշան զրոշները կծածանէին՝ որոնք շատ անգամ թշնամիք պատերազմաց մէջ Տրդատայ բանակին ձակառը տեսած էին. արքունի նուագարանը քաղցր կհնչէր, կերգէր թագաւորին Հուռմոց աշխարհին մէջ արած քաջութիւնքը և մղած պատերազմաց յաղթանակները. դիւց սղն նահապետին Հայկայ ընդ Անիայ կռիւը, Շամիրամայ առփանքը և Արայ քաջին զիւցազնակերպ նահապետակութիւնը: Հոն էին հաւաքուած նաև արքունի հրամանաւ Պողթն գաւառին քաջարուեստ բամբիւռն զարնողները, որոնք քաղաքին մէջ շատ տեղ տկուսբ բուրած այն օրուան հանդէսը միայն փառաւորելու համար կնուագէին, և հայրենի աշխարհին յիշատակները գեղեցկահիւս իմաստից ճարտարութեամբ կենդա-

նացնելով ժողովրդեան սրտին հրճուանք և խնդութիւն կազդէին. մանաւանդ գեղեցիկ այլարանութեամբ կերգէին սաեպ Ալանաց պատերազմը և Վաթինիկան հարսանիքը. որոց ներգաշնակութիւնէ հրճուացած կըռչէր. « Վարձան մեզ մեր նախնիհակայից օրերուն փառքը , , :

Թէպէտ և Հայաստան դեռ իւր թագուհին չէր ծանչնար, բայց կզգար որ արժանի էր այն մեծ փառաց. Անակայ տըւած մահաբեր հարուածէն վերջը խնդացած չէր, և ոչ հայրենի հանդէսներ կատարած. գտաւ թագաժառանգը՝ որ Վասանեան անողորմ սուրբ խորտակելով ազաւեց զինքը բանակալութիւնէ, բայց խնդութիւնը կատարեալ չէր, վասն զի այրի էր Հայոց գահը. որոյ վերայ հիմայ աշխարհաց զարմանալի և թագաւորաց նախանձելի թագուհի մը բազմեցնելով, եթէ ոչ նորագեղեցիկ երեսաց՝ բայց սուրբ սսկերաց պիտի աղաչէր միշտ:

Արբօր հարսանեաց հանդէսը ըստ կամաց թագաւորին կկատարուէր, հրաման տուաւ որ Հայոց թագուհին առաջաստ բերին. զուեկագունդ կըլթաման, զօրպ պիտք հանդերձ զօրօք շքեղաշուք կարգ կարգ ըստ օրինի պատերազմի ելան, և պատեցին ծանապարհները ուսկից Հայոց թագուհին պիտի անցնէր. անկէ վերջը ձիաւորաց գունդը ելաւ, և քաղաքին հիւսիսակողմը տարածուեցաւ. ոսկիապատ կառքեր ետէէ ետե արշաւելով կըլթոչին, շքեղ գահաւորակներ թագաւորին սպասաւորները կտանին. նախարարք և դրանիկ պարգեններով ընդ առաջ կգիմեն, և նոցա տիկնայքը հարսանեաց պատմուածանները կկրեն. իսկ տոհմական

օրիորդք ի նշան մեծարանայ ճանապարհաց վերայ խուճք խուճք կանգնած ձեռքերնին ծաղկեայ պսակներ, կսպասեն թագուհւոյն՝ որ գարշապարաց տակը տխտեն:

Բայց ինչո՞ւ կուշանայ շայոց թագուհին, սուրհանգակներ կերթան, կդառնան՝ և լուր չեն բերեր. նայինք ո՞վ դարձաւ, ահա ամբօխը, ի՞նչ կխօսին. «Տեսանք զինքը զից հաւասար չքնաղ և հրաշալի, որոյ նմանը թագաւորաց առագաստներուն մէջ չգտնուիր. Գիտի՞ղեախանութի ձեռքէն փախստական է, որ կուզէր զինքը մեծատարած աշխարհին թագուհի պսակել. անունը շուխիսիմէ, շուսոց թագաւորաց ցեղէն բրիսառնէից կրօնքը կը պաշտէ, 1: Ե, յս այն աղջիկն է՝ որ շուսիմ քաղաքէն ծպտեալ ընկերակիցներովը կը փախչէր:

Իսկ մեք առաջ անցնինք, երթանք Աշագարշապատու հնձանքը, և ականատես լինինք հարսանեաց յուղարկաւորութեան հանդիսին: Աշաւ օտքի կանգնեցաւ, իւր ընկերաց մէջ ամենէն բարձրահասակ, չըքնաղ և նազելին էր. նայեցաւ անլուրջ հեթանոս ամբօխին՝ որ եկեր էին զինքը ընդունել. տեսաւ մեծամեծ պատրաստութիւնները՝ որ իրեն համար թագաւորէն հրամայեալ էր. «Չքնաղ օրիորդ, գոչեց ամբօխը, զարդարեալ պատրաստ է առագաստդ, որ երբեմն անողորմ թշնամին գաւելով ուզեց աւերել և խաւար բերել մեր աշխարհին գլուխը. դու արդ պիտի պայծառացնես այն առագաստը կրկին: Բնդունէ թագաւորին և ազգին հրաւերը, եկ երթանք փառաց գահդ բազմէ, և պըսակներ գքեզ այն պսակաւ՝ որով պը-

սակուեցան մեր թագուհիք. քու անդրիդ պիտի կանգնենք Բնահայ մեհնինն մէջ՝ որոյ հաւասար չքնաղ ես. գքեզ պիտի գգուէ սիգապանձ կորովին Տրդատ, որոյ բագուկները կպատեն և կզրկեն զայաստան համայն, և զիցատիսյլ երեսացդ ազգը երկրպագութիւն պիտի ընէ, 1: Ասեց շուխիսիմէ հրաւերը, գոյալով և պատկառելով ծածկուեցաւ ընկերացը մէջ. բայց թագաւորին սպասաւորքը կերթան կգտնեն զինքը, կուզեն ազքատին զընտաները մերկացնելով ծիրանխներով զարդարել և առնել երթալ:

Խոռովեցան, իրար անցան ընկերակիցք, և չեն գիտեր թէ ինչպէս զինքը ազատեն. իսկ հեթանոսք ապշած կգարձանան թէ ինչո՞ւ այս մեծ փառքէն զինքը կզրկին: Իսկ շուխիսիմէ ո՞ւր է, միթէ՞ չուզէ երթալ. — իւր գայիկին Պայիանէին զիբը ապաւինած՝ նորա մտիկ կանէ, «Փախանք, որդեակ իմ, հեթանոս ամբարիշտ թագաւորի մը ձեռքէն, որ սրբակրօն հոգւոյդ մաքրութիւնը երկրաւոր փառօք կուզէր աղանդել, և մասնուեցանք ահա մի ուրիշ անօրէն բռնաւորի ձեռք. դու ընտրուած ես ոչ թագաւորաց՝ այլ Եսաուծոյ համար. յիշէ որ դու ևս այն ամենայն փառքը ունէիր, բայց ատեցիր, ձգեցիր հայրենի ձօխ տունդ, մերկացար ծիրանիդ, և զՔրիստոս միայն սիրեցիր:»,

Խագաւորին սպասաւորքը հրաւերը կրկինն, կտիպեն, բայց Պայիանէ սիրելի սանը բազկացը մէջ ամբապինդ զրկած է զեւ ևս. խանդազատեցաւ շուխիսիմէ, զօրացաւ հաւատքով, թոռաւ, կլաւ դաշիկին զրկէն, և ձեռքերը խաշաձե ի սըրախն ամփոփած ծուներ դրոււ, և լուիկ հոգ-

ւով Աստուծոյ կազօթէր. և այլա ոտքի կանգնելով ազդու ձայնիւ գոչեց հեթանոսս ամբոխին. « Այտ ատրէք, և տ, ծիրանին և պատմութեանը զոր ես խմանկու թեանէն մերկացայ, և ասացէք ձեր թագաւորին որ՝ նուիրեալ եմ Աստուծոյ հոգւով և մարմնով, և ուխտեր եմ զինքը միայն սիրել մահու չափ »:

Իսկ թագաւորը ուրախ և շքեղ գահը բազմած թագուհւոյն կնիկաւոր. ոչ պատերազմաց և ոչ աշխարհին վերայ կմասձէր. զգուանօք կնայի յաղթական երկաթին վերայ, որով թշնամեաց զլուսը փրշրած շայաստանի փառքը և համբաւը ընդ ամեն աշխարհ հաշակած էր. սոսկալով կրշիշէ պատերազմները և աչքին առջև կրբերէ յաղթութեանց դաշտերը, երբոր ինքը լուսակիլ սեաւ երիվարը աշտանակեալ, ետեէն քաջարդթ բանակը ընթանալով, թշնամեաց ընտիր գուրդերը գետին տապալելով ընտանեաց և աշխարհաց բազը կխաւարէր. այլ նոյն միջոցին սիրով հրձուացեալ կղզար, և կերպէր միայն առագաստին երջանկութիւնը և պայծառ բազը. ահա իշխաններէն ունեք կհասնին, և կգառմեն եղած անցքը:—

Մեծագոր թագաւորին կերպարանաց վրայէն սիրոյ թախարան հետանալով ի ընդու թիւնը դարձաւ ի արամութիւն. հիացաւ, կատկեցաւ. « Արեմն ադ անծանօթ օրիորդն ալ, դոչեց, զոր ես շայոց թագուհի ընարեցի, Վրկորի Աստուածը կպաշտէ, որ կամ սցս չհազանդեցաւ և չպաշտեց զԱնահիւս, չարչարեցի, տանջեցի, և հուսկ այլա Խոր Վիրապին մէջ թաղեցի »: ասաց թագաւորը, կտողած գահէն ելաւ, կշրջէր և կխոսար. և դար-

ձաւ իշխանաց որոտալով կրկնեց. « Ի՞նչ պիտի ասեն արեւելք և արեմաւոր՝ որ Տըրդատ չկրցաւ աղջկան վր յանդգնութիւնը կտարել. գնացէք բռնութեամբ բերէք:— Այս հրամանը թագաւորն տուաւ. իսկ իշխանք և սպասաւորք կփութան հրամանը կատարել. հասան Վաղարշապատու հնձանքը, յարձակեցան, յափշտակեցին զՌիփսիմէ ընկերակցացն զրկէն, երբեմն վերամբարձ՝ երբեմն ալ ընդ քարշ կտանին զինքը թագաւորին:—

Մը է հիմայ Ռիփսիմէ. թագաւորին ապարանքը առագաստին մէջ արգելալ. երթանք զինքը հոն ևս տեսնենք:— Ահա բացուեցաւ առագաստին դուռը. ո՞վ ներս մտաւ. շայոց քաջայաղթ, հսկայ, աշխարհաւեր, անընկճելի, սէգ թագաւորն Տըրդատ, Արքայական ամենայն պերճութիւնը և շքեղութիւնը վրան կկրէր, որոյ նման տեսած էր զինքը շքեղ շայաստան օրը միայն՝ երբօր փախստական թագաժառանգը յաղթական զինօք դանալով Անահայտայ բազնին զրայէն արքայական թագը և գաւազանը ընդունելով շայոց գահը կժառանգէր: Օրիանին Վոթթացոց Ռաչէ թագաւորին կանակէն յափշտակած էր, մատանին Ռոստոց Վիոկղեալանոս կայսեր, իսկ գլխուն թագը հօրը մեծին Խոսրովայ, որով Վաղարշակ և իւր յաջորդք պսակուեցան:—

Այսպիսի շքեղութեամբ շայոց թագուհւոյն առագաստը մտնելով ծիրանի և մատանի պարզե կտանէր նմա, կատղած, շփոթած թագաւորը դարձեալ սիրով ամոքեալ հրձուացած կերեւէր. բարկութեան մէջը փարատած մեծարանքը կը յայտնէր. չէին այն ահարկու ցցուած յոն-

քերը՝ որ թշնամիք շատ անգամ տեսած սարսփած էին, ոչ այն վրիժառու աչքերը՝ որով Պարսից աշխարհին վերայ կնայէր և կշափէր, և ոչ այն ահեղ ձայնը՝ որով հեւստային ազգաց գուարով կը թնդացնէր զիրենք. այլ խնդութեամբ և սիրով զգածեալ կուզէր Հայոց թագուհւոյն յանդգնութեանը ներդրումիս լի ներով սիրաբ գրաւել: Հիացաւ թագաւորը զինքը տեսածին պէս, առագաստին պերճութիւնը քան նորա գեղեցկութիւնը անհամեմատ խոնարհ էր. երանի տըւաւ, երջանիկ սեպեց զինքը քան զՆիօղէտիանոս, որոյ կորուսած բազը ինքը գտաւ և պիտի վայելէր. և բոլոր արեւելեան ազգաց գեղեցիկ և ընտիր թագուհիք իրրե նաժիշտ պիտի համարուէին Հայոց չքնադագնիզ զշնոյնն բով:

Թագաւորը երկոյն ատեն վրան կնայի, և վերջապէս այսպէս խօսի սկսաւ. «Աս եմ, ասաց, այս ձոխ և մեծազօր ազգին թագաւորը. ինձմէ առաջ դահիս վերայ հսկայք և աշխարհակալք իշխեր են, որոց փառքին և քաջութեանցը նախանձորդ և կարող եմ. անուհս Հռոմոնց մէջ հրաշակեալ, Պարսկաստան և Ատրեստան զիս կձանձնայ. զքեզ ընտրեցի բիւրաւոր աղջիկներուն մէջէն արքայական առագաստս պայծառաց ելով փառացս հարդը ընել, և Աւ սկսաւ չափել մեծատարած թագաւորութեան սահմանը, համբեց նախարարաց դահիրը և զօրաց բազմութիւնը, պատմեց հին և նոր յազթութիւնքը, մեծութիւնը և ճիսութիւնը առջևը թափելով կրկնեց, «Ար հետս իշխելով այս ամենայն փառքը պիտի ժառանգես եթէ յանձն առնես Հայոց թա-

գուհի լինելու, և պարգևեց իրեն ծիրանին և մատանին:

Պոչեց Հոփսիսմէ զօրացեալ թագաւորին երեսն ի վեր, ամփոփեց ձեռքը, և քայլ ընդ քայլ ետ քաշուելով մերձեց, վանեց իրմէ. — «Ե՛նչ յանդգնութիւն է, գոչեց թագաւորը, զքեզ՝ անձանօթ աղջիկ, անարգ և թշուառ վիճակէ մինչև թագաւորութեան գահը բարձրացնելով բազմասիրունդ քաջ ազգի թագուհի կը պսակեմ, եթէ կտանես որ սէրը սրտիս մէջ կկայտայ, սուրբ՝ մահն ալ ձեռացս մէջ կվտարի, միայն գեղեցկութեանդ համար կխնայեմ և կնրբեմ քեզ, և Խոկ Հոփսիսմէ զարձաւ այսպէս թագաւորին պատասխանեց. «Փառքերեդ կհրաժարիմ և պիզծ կհամարիմ առագաստդ, պատրաստ եմ մեռնիլ երկնուօր թագաւորիս սիրոյն համար, որում զիս նուիրած խոստացեր եմ հաւատարիմ մնալ. թող տուր զիս իմ անարգ վիճակիս մէջ մնամ, որ ես կամօքս ընտրեմ եմ»:

Աչ ոք բազկաւ և ոչ ոք զնուք կրցեր էր խրոխտայ այն թագաւորին դէմ. ուստի զգաց մէկէն ախոյեանին զօրութեան չափը, զազանային կատաղութեամբը զարձեալ եկաւ գտաւ զինքը, ժանաացաւ աչքը, կերպարանքը դառնացաւ, ժողովեց ուժը, հսկայացաւ, արձանացաւ, ուղղեց ինքը զինքը, և ոսկերաց զօրութեան վըտահանարով յարձակեցաւ Հոփսիսմէի վերայ:

Ազակնք, մաննք թագաւորական ապարանքէն ներս, և հանդիսատես լինինք այս մեծ նահատակութեանս. ինչպէս թշնամույ դէմ՝ նոյն օրինակ կմաքառի, և յաղթել կձգնի. կգոչէ, կաստէ, ահեղ

աչքերը անկած՝ սարսափ կուզէ տալ, մէկ քայլ յառաջ կ'յարձակի, երեք քայլ ախոյեանը զինքը կ'վանէ և կընկրկէ, կը փորձէ կրկին՝ կնահանջէ կրկին, արիւն անշարժ թիւ է հակառակորդը, աներևոյթ զօրութիւն մը կ'զօրացնէր զինքը, որ հզօր էր քան զթագաւորին բազկաց ուժը: Առուեցաւ բռնաւորը բոլոր ուժով, և ըստ պատերազմական արհեստին ամենայն հնարագիտութիւնք ի գործ դրաւ, բայց չկրցաւ յաղթութիւնը ժառանգել, որ մեծ և գեր ի վեր կ'համարէր քան ամենայն յաղթական դասին: Այն ատեն զիջաւ, խնարհեցաւ, և սկսաւ յաղթականին պէտքերէն խնդրի, և սիրաբանջը պարզելով ասաց. «Տես խնարհեալ ոտքերուդ ասկ քաջ ազգիս թագաւորը, մի՛ առեր զինքը, և մի՛ գրկեր առագաստ երջանկութիւնն՝ որ քեզ մով կ'յուսայ, և թէ թագաւորութիւնս և ժողովուրդս քեզ կ'համարին՝ երթամ յաղթեմ աշխարհաց, աւերեմ, կողոպտեմ, թագաւորաց թագուհեաց թագերը յափշտակելով քերեմ, թափեմ ոտքերուդ ասկ, և զքեզ ազգաց և աշխարհաց ևս թաղուհի կարգեմ », : Աայց յաղթականը չզիջաներ աղաչանացը, կատակ, կնախատէ զինքը, և զայրացեալ վերան կնայի:

Մենամարտեցան մինչև զիշերուան մէկ պահը, և այս առաջին անգամ էր որ՝ աշխարհաց յաղթող թագաւորը յաղթուած գահին վերայ ընկաւ մնաց յուսահատեալ, տեսէք, մի՛ թէ կ'ձանձաք՝ ծիրանին պատուամբ, զլսոյն թագը և թագաւորական նշանը սանակսի ցիր և ցան գետնին վերայ կշողան, ամօթապարտ

կնայի, կտեսնէ յաղթականը անողորբելի զիմացը կանգնած, բայց վրէժխնդիր ըլլալու զօրութիւն չունի: Իսկ այս այն թագաւորն է, որ շուովմայ կրկիսին մէջ բազկաց ուժովը ձիւրջաւ կառքերը կը կանգնեցնէր, որ շուովմայ աշխարհը մենամարտութեամբ Առթացեաց շուէ թագաւորին ձեռքէն կանգաւեր, որով և ինքը արժանի կըլար իւր նախնեաց դահը ժառանգել, որ իւր զօրապետին՝ Ղիկանէին վրանին դուռը միայնակ կանգնած իւր տէրը կ'պաշտպանէր բոլոր զօրաց բանակին դէմ, որ վայրի ցուրերուն կ'զիւրնեւրէն բռնած թօթուելով կ'կորդէր, որ վիզերուն մէջ հետեակ մանելով՝ իրարու վերայ գետին կտապալէր, որ զՎահագուհին պատերազմի գաշտին մէջ մէկ սրոյ հարուածով զինքը և զձին միջակաուր կընէր, այս այն թագաւորն է՝ որ Քրիստոսի նահատակը զՎրիգօր տասն և չորս տարի վերջը Խոր - Ալիբազէն հանեց, հալածեց շայտասանէն զիցապաշտութիւնը, և եօթը օրուան ճանապարհ հեռացաւ, գնաց Մասիս լեռնէն վեր, և ուժը հաստ անտաշ ստուար քարեր կռնակը զարնելով՝ կրերէր շուրփսի մէկի վկայարանին հիմը կ'ձգէր:

(Ի յեռ-գոյն)

Մ. ՔԱԼԵԱՆ.

